

1. Փաստաթղթային ինկասո

Ինկասոյի առավելությունները վաճառողի (արտահանողի) համար

- Վճարումները ստանալու առավել ապահով տարբերակ է, մասնավորապես՝ ծովային փոխադրումների ժամանակ, երբ բնօրինակ նավաբեռնագրերը չեն հանձնվում գնորդին մինչև վերջինիս կողմից գումարի վճարումը կամ մուրհակի ակցեպտը:
- Հնարավոր է պահանջել գնորդի բանկի ակցեպտավորված մուրհակի վճարման երաշխիք:

Ինկասոյի առավելությունները ներմուծողի համար

- Հնարավորություն է տալիս ապրանքների դիմաց վճարումը կամ ակցեպտը կատարել առաքման փաստաթղթերին ծանոթանալուց հետո:
- Գործարքի ցածր բարդության աստիճանի և պարզեցված փաստաթղթավորման շնորհիվ հաճախ գործում են համեմատաբար ցածր բանկային սակագներ:
- Համապատասխան պահանջներին բավարարելու դեպքում Բանկը պատրաստ է ֆինանսավորել գործարքները:

Գործառնության տեսակը	Սակագներ
Հաճախորդի պատվերով թողարկվող Ինկասո (վաճառողի ինկասո)	
Փաստաթղթային ինկասո հանձնարարագրի թողարկում ինկասո փաստաթղթերի ստուգում և առաքում	0,25%, նվազագույնը 30,000 ՀՀ դրամ առավելագույնը 75,000 ՀՀ դրամ
Փաստաթղթային ինկասո հանձնարարագրի պայմանների փոփոխում, ներառյալ նրա չեղյալ համարումը	30,000 ՀՀ դրամ
Հաճախորդի անունով թողարկված Ինկասո (գնորդի ինկասո)	
Փաստաթղթային ինկասո հանձնարարականի (կամ դրա փոփոխության) ծանուցում	15,000 ՀՀ դրամ
Փաստաթղթային ինկասո ակցեպտավորում կամ վճարում	0,25%, նվազագույնը 30000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ
Փաստաթղթային ինկասո դրված, սակայն հաճախորդի կողմից չվճարված	35,000 ՀՀ դրամ

փաստաթղթերի վերադարձ թղթակից բանկին	
Ինկասո փաստաթղթերի փոխանցում առանց ակցեպտի կամ վճարման պայմանի	25,000 ՀՀ դրամ

Թղթակից բանկերի միջնորդավճարները և փոստային ծախսերը գանձվում են լրացուցիչ:

Ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

2. Բանկային երաշխիք

Երաշխիքի առավելությունները գնորդի (ներմուծողի) համար

- Գնորդը (ներմուծողը) կարող է ներմուծել ապրանք հետաձգված վճարման պայմանով (երաշխիքային նամակի շնորհիվ կանխիկ վճարման պայմանը կարող է փոխարինվել հետաձգ ված վճարման պայմանով):
- Հետաձգված վճարման պայմանի շնորհիվ գնորդը (ներմուծողը) կարող է ապրանքի դիմաց վճարումը կատարել առանց վարկային ռեսուրսների ներգրավման:
- Գնորդը (ներմուծողը) հնարավորություն է ստանում կրճատել ծախսերը, քանի որ բանկային երաշխիքը վարկից անհամեմատ էժան է:
- Երաշխիքը թույլ է տալիս գործընկերոջ հետ հաստատել առավել վստահելի հարաբերություններ:

Երաշխիքի առավելությունները պատվիրատուի, վաճառողի (արտահանողի) համար

- Ունենալով գնորդի (ներմուծողի) վճարային պարտավորություններն ապահովող երաշխիք՝ վաճառողն (արտահանողն) ապահովագրվում է իր գնորդի (ներմուծողի) կողմից գումարի չվճարման ռիսկից:
- Երաշխիքը հնարավորություն է տալիս ապահովելու հնարավոր կորուստների և ծախսերի փոխհատուցումը, որոնք կարող են առաջանալ մրցույթը հաղթող, աշխատանքները կատարող, ծառայությունները մատուցող կամ ապրանքներ մատակարարող ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու դեպքում:
- Վաճառողը (արտահանողը) կարող է շուկայում հանդես գալ մրցակիցների համեմատ առավել մրցունակ առաջարկով՝ վաճառելով (արտահանելով) ապրանքը հետաձգված վճարման պայմանով:
- Մրցունակ առաջարկով հանդես գալու շնորհիվ՝ վաճառողը (արտահանողը) կարող է ապահովել սպառման առավել մեծ ծավալ և, հետևաբար, մեծացնել շուկայում զբաղեցրած իր ընկերության մասնաբաժինը:

- Երաշխիքը թույլ է տալիս նվազագույնի հասցնել առևտրային գործարքում առկա ռիսկերը:

Գործառնության տեսակը	Սակագներ
ԱրարատԲանկի կողմից երաշխիքների թողարկում դրամական միջոցների դեպոնացմամբ կամ ավանդադրված միջոցներ ապահովմամբ	
ա/ ՀՀ տարածքում	Տարեկան 1% (գանձվում է միանվագ տրամադրման պահին կամ ամսական կտրվածքով՝ երաշխիքի ողջ ժամկետի համար՝ նվազագույնը միանվագ 25,000 ՀՀ դրամ)
բ/ ՀՀ տարածքից դուրս	Տարեկան 1.2%-3%, (գանձվում է միանվագ տրամադրման պահին կամ ամսական կտրվածքով՝ երաշխիքի ողջ ժամկետի համար՝ նվազագույնը միանվագ 50,000 ՀՀ դրամ)
ԱրարատԲանկի կողմից երաշխիքների թողարկում այլ ապահովմամբ	
ա/ ՀՀ տարածքում	Տարեկան 1.5%-3%, (գանձվում է միանվագ տրամադրման պահին կամ ամսական կտրվածքով՝ երաշխիքի ողջ ժամկետի համար՝ նվազագույնը միանվագ 25,000 ՀՀ դրամ)
բ/ ՀՀ տարածքից դուրս	Տարեկան 2%-4.5%, (գանձվում է միանվագ տրամադրման պահին կամ ամսական կտրվածքով՝ երաշխիքի ողջ ժամկետի համար՝ նվազագույնը միանվագ 50,000 ՀՀ դրամ)
Երաշխիքի պայմանների փոփոխություն, այդ թվում ժամկետի երկարաձգում կամ գումարի ավելացում	20000 ՀՀ դրամ
Երաշխիքի գումարի վճարում չահառուին պահանջի դիմաց	50,000 ՀՀ դրամ
Այլ բանկերի կողմից Հաճախորդի օգտին թողարկված Երաշխիքի սպասարկում	
ԱրարատԲանկ ԲԲԸ կողմից բանկային երաշխիքի տրամադրում այլ բանկի հանդիպակաց երաշխիքի դիմաց	Ըստ պայմանավորվածության
Երաշխիքի, այդ թվում ցանկացած փոփոխության ծանուցում	25,000 ՀՀ դրամ
Երաշխիքի ներքո հաճախորդի վճարման պահանջի կազմում	30,000 ՀՀ դրամ
Հարցում թղթային կրիչով թողարկված Երաշխիքի	25,000 ՀՀ դրամ

իսկության և դրա վրա առկա կնիքի և ստորագրությունների հավաստիության վերաբերյալ	
---	--

- Թղթակից բանկերի միջնորդավճարները և փոստային ծախսերը գանձվում են լրացուցիչ, բացառությամբ հաստատման միջնորդավճարները
- Երաշխիքի տրամադրման նպատակով վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվում է միջնորդավճար 15,000 ՀՀ դրամի չափով
- Սույն սակագները կիրառելի են նաև Պահուստային Ակրեդիտիվների (Standby Letter of Credit (SBLC)) համար

Պահանջվող փաստաթղթեր

Իրավական կարգավիճակի և ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ փաստաթղթեր

1. Վարկային հայտ
2. Իրավասու մարմնի որոշում՝ Վարկ ստանալու և գույքը գրավադրելու վերաբերյալ
3. Հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը՝ իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կոդը (ՀՀՎՀ)
4. Տեղեկանք Պետ. ռեգիստրից կանոնադրության փոփոխության, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված Կենտրոնական դեպոզիտարիայի (ռեեստր վարողի) կողմից, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված բաժնետերերի ռեեստր վարողի կողմից
5. Տնօրենի և 25% փայամասնությունը գերազանցող մասնակիցների անձնագրի և սոց. քարտի պատճենները
6. Սեփականատերերի, մասնակիցների, բաժնետերերի և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ գրավոր հայտարարագիր՝ անուն, ազգանունը (անվանումը), գտնվելու կամ բնակվելու հասցեն, ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները: Սույն Կարգի իմաստով փոխկապակցված են համարվում “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված անձինք
7. Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար թույլատրող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ լիցենզիաներ, սերտեֆիկատներ, հավաստագրեր և այլն
8. Տեղեկանք ՏՀՏ-ից բյուջեի հանդեպ առկա պարտավորությունների վերաբերյալ (ըստ անհրաժեշտության)
9. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության բացված տեսքով)
10. Հիմնական միջոցների ցուցակ մնացորդային արժեքով, ապրանքանյութական պաշարների մնացորդ՝ հումք, նյութեր և պատրաստի արտադրանք (ըստ անհրաժեշտության)
11. Ֆինանսական հաշվետվությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ, սոց

հատկացում, եկամտահարկ

12. Այլ Բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ վերջին 12 ամիսների ընթացքում բանկային հաշիվների շարժի քաղվածքներ
13. Գործող պայմանագրեր և համաձայնագրեր՝ իրացման, մատակարարման, վարձակալության և այլն, հաշիվ ապրանքագրեր՝ ներմուծման և արտահանման
14. ՏՀՏ-ի կողմից իրականացված վերջին ստուգման ակտը կամ Աուդիտորական կազմակերպության եզրակացությունը (ըստ անհրաժեշտության):

Անշարժ գույքի գրավադրման դեպքում

1. Սեփականության վկայական (բնօրինակ)
2. Սեփականության իրավունքի հիմքը (բանկի պահանջով)
3. 3-րդ անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կոդը (ՀՀՎՀ) և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին
4. Տեղեկանք “ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Պետական Միասնական Կադաստր”-ի տարածքային ստորաբաժանումից՝ գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ (ներկայացվում է Վարկի տրամադրման դրական որոշման դեպքում)
5. Համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն:

Այլ գույքի գրավադրման դեպքում

1. Գույքի ցանկը՝ նշելով չափի միավորը, քանակը, հաշվեկշռային արժեքը, և ձեռք բերման փաստաթղթերը
2. Ավտոմեքենայի դեպքում տեխնիկական անձնագիր և սեփականության իրավունքի վկայականը (բնօրինակ)
3. 3-րդ անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կոդը (ՀՀՎՀ) և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին
4. Բանկի պահանջի դեպքում համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն:

Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է բանկը

1. Բանկը կարող է պահանջել ապահովագրել գրավի առարկան կորստյան և վնասվածքի ռիսկերից, ներկայացնել դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթեր
2. Անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ փաստաթղթեր:

Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակում կրկնվող վարկառուներից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Վարկային հայտ

2. Իրավասու մարմնի որոշում՝ Վարկ ստանալու և գույքը գրավադրելու վերաբերյալ
3. Տեղեկանք Վարկառուի կողմից կանոնադրության փոփոխության, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ
4. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության)
5. Ֆինանսական հաշվետվությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ, սոց հատկացում, եկամտահարկ):

Անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ փաստաթղթեր

Հաճախորդը պետք է ներկայացնի նշված փաստաթղթերի բնօրինակները կամ սահմանված կարգով վավերացված պատճենները:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

3. Փաստաթղթային ակրեդիտիվ

Ակրեդիտիվի առավելությունները գնորդի (ներմուծողի) համար

- Վաճառողն (արտահանողն) ապրանքն առաքում է նախքան գնորդի (ներմուծողի) կողմից գումարի վճարումը
- Վճարումն իրականացվում է վաճառողի (արտահանողի) կողմից ապրանքն առաքելուց և ապրանքառաքման փաստաթղթերը ներկայացնելուց հետո, ինչը նվազագույնի է հասցնում գնորդի (ներմուծողի) ռիսկերը
- Վաճառողի (արտահանողի) կողմից նախապես հաստատված ապրանքառաքման պայմաններից որևէ մեկի խախտումը կարող է հանգեցնել առաքված ապրանքի դիմաց գումարի չվճարման
- Վաճառողի կողմից նախապես հաստատված ապրանքառաքման պայմաններից որևէ մեկի խախտումը կարող է հանգեցնել առաքված ապրանքի դիմաց գումարի չվճարման
- Ակրեդիտիվի դեպքում վաճառողը հենվում է բանկի վճարունակության վրա և վստահ է, որ ակրեդիտիվով սահմանված բոլոր պայմանները կատարելուց հետո կստանա վճարումը: Ուստի, չունենալով ապրանքի դիմաց չվճարման ռիսկ՝ վաճառողը կարող է առաքել ապրանքը վճարման հետաձգման պայմանով (օր. տրանսպորտային բեռնագրի տրման օրվանից հաշվված 90 օր հետո)
- Ակրեդիտիվի գումարի վճարման համար բավարար ֆինանսական միջոցների բացակայության դեպքում Բանկը կարող է միաժամանակ ֆինանսավորել Ձեր առևտրային գործարքները
- Գնորդը կարող է վստահ լինել, որ վաճառողը չի ստանա համապատասխան վճարումը, եթե խախտի ապրանքի առաքման նախապես սահմանված վերջնաժամկետը և ապրանքը չառաքի սահմանած ժամկետում և պայմաններով:

Ակրեդիտիվի առավելությունները արտահանողի (վաճառողի) համար

- Վաճառողը (արտահանողը) վստահ է, որ կստանա առաքված ապրանքի դիմաց վճարումը, քանի որ ակրեդիտիվի դեպքում վաճառողի հանդեպ վճարման պարտավորությունը գնորդից (ներմուծողից) անցնում է Բանկին
- Արտահանման ակրեդիտիվի շնորհիվ վաճառողը կարող է իր գործընկերներին առաջարկել հետաձգված վճարման պայման, ինչը կնպաստի իրացման ծավալների աճին, նոր շուկաներ մուտք գործելուն: Ընդ որում, ապրանքի դիմաց վճարումը կարող է ստանալ ավելի շուտ՝ արտահանման ակրեդիտիվով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դիմաց
- Շնորհիվ վճարման ապահով եղանակի՝ վաճառողը հնարավորություն է ստանում միջազգային շուկայում հանդես գալ առավել մրցունակ պայմաններով
- Վաճառողը ստանում է առաքված ապրանքի դիմաց վճարումը մինչև ապրանքը գնորդին հասնելը
- Գնորդը չի կարող միակողմանիորեն չեղյալ հայտարարել առևտրային գործարքը կամ փոփոխել որևէ պայման՝ առանց վաճառողի նախնական համաձայնության:

Գործառնության տեսակը	Սակագներ
Ակրեդիտիվներ ստացված Հաճախորդի օգտին (վաճառողի ակրեդիտիվ)	
Ակրեդիտիվի տեքստի նախնական կազմում և ակրեդիտիվի պայմանների համաձայնեցում	Միջնորդավճար չի գանձվում
Ակրեդիտիվի/այդ թվում, յուրաքանչյուր փոփոխության/ ծանուցում	15,000 ՀՀ դրամ
Ակրեդիտիվի փաստաթղթերի ստուգում	
ա/ Առանց տարաձայնությունների	25,000 ՀՀ դրամ
բ/ Տարաձայնություններով	50,000 ՀՀ դրամ
Ակրեդիտիվի հաստատում ԱրարատԲանկ ԲԲԸ կողմից	0.15% յուրաքանչյուր եռամսյակի համար, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ
Թողարկված ակրեդիտիվի վճարում	25,000 ՀՀ դրամ
Հաճախորդի պատվերով թողարկվող ակրեդիտիվներ (գնորդի ակրեդիտիվ)	
Ակրեդիտիվի տեքստի նախնական կազմում և ակրեդիտիվի պայմանների	Միջնորդավճար չի գանձվում

համաձայնեցում	
Ակրեդիտիվի թողարկում վարկային միջոցների հաշվին	
ա/ Առանց թղթակից բանկի կողմից հաստատման	Յուրաքանչյուր եռամսյակի համար 0.3%, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ (գանձվում է միանվագ՝ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար)
բ/ Թղթակից բանկի կողմից հաստատումով	Յուրաքանչյուր եռամսյակի համար 1,25%, նվազագույնը 150,000 ՀՀ դրամ (գանձվում է միանվագ՝ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար):
Ակրեդիտիվի թողարկում դրամական միջոցների դեպոնացմամբ	
ա/ Առանց թղթակից բանկի կողմից հաստատման	Յուրաքանչյուր եռամսյակի համար 25,000 ՀՀ դրամ
բ/ Թղթակից բանկի կողմից հաստատումով	Յուրաքանչյուր եռամսյակի համար 0.15% min 50,000 ՀՀ դրամ, ինչպես նաև լրացուցիչ գանձվում է թղթակից բանկի հաստատման միջնորդավճարը
Ակրեդիտիվի պայմանների փոփոխում կամ չեղյալ համարում, այդ թվում ժամկետի երկարաձգում կամ գումարի ավելացում	20,000 ՀՀ դրամ
Ակրեդիտիվի ներքո վճարում կամ ակցեպտավորում	0.1%, նվազագույնը 25,000 ՀՀ դրամ, առավելագույնը 50,000 ՀՀ դրամ
Ակրեդիտիվի փաստաթղթերի ստուգում	
ա/ Առանց տարաձայնությունների	25,000 ՀՀ դրամ
բ/ Տարաձայնություններով	50,000 ՀՀ դրամ

- Թղթակից բանկերի միջնորդավճարները և փոստային ծախսերը գանձվում են լրացուցիչ
- Ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ
- Ակրեդիտիվի տրամադրման նպատակով վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվում է միջնորդավճար 15000 ՀՀ դրամի չափով

Պահանջվող փաստաթղթեր

Իրավական կարգավիճակի և ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ փաստաթղթեր

1. Վարկային հայտ

2. Իրավասու մարմնի որոշում՝ Վարկ ստանալու և գույքը գրավադրելու վերաբերյալ
3. Հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կողը (ՀՀՎՀ)
4. Տեղեկանք Պետ. ռեգիստրից կանոնադրության փոփոխության, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված Կենտրոնական դեպոզիտարիայի (ռեեստր վարողի) կողմից, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված բաժնետերերի ռեեստր վարողի կողմից
5. Տնօրենի և 25% փայամասնությունը գերազանցող մասնակիցների անձնագրի և սոց. քարտի պատճենները
6. Սեփականատերերի, մասնակիցների, բաժնետերերի և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ գրավոր հայտարարագիր՝ անուն, ազգանունը (անվանումը), գտնվելու կամ բնակվելու հասցեն, ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները: Սույն Կարգի իմաստով փոխկապակցված են համարվում “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված անձինք
7. Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար թույլատրող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ լիցենզիաներ, սերտիֆիկատներ, հավաստագրեր և այլն
8. Տեղեկանք ՏՀՏ-ից բյուջեի հանդեպ առկա պարտավորությունների վերաբերյալ (ըստ անհրաժեշտության)
9. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության բացված տեսքով)
10. Հիմնական միջոցների ցուցակ մնացորդային արժեքով, ապրանքանյութական պաշարների մնացորդ՝ հումք, նյութեր և պատրաստի արտադրանք (ըստ անհրաժեշտության)
11. Ֆինանսական հաշվետվությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ, սոց հատկացում, եկամտահարկ
12. Այլ Բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ վերջին 12 ամիսների ընթացքում բանկային հաշիվների շարժի քաղվածքներ
13. Գործող պայմանագրեր և համաձայնագրեր՝ իրացման, մատակարարման, վարձակալության և այլն, հաշիվ ապրանքագրեր՝ ներմուծման և արտահանման
14. ՏՀՏ-ի կողմից իրականացված վերջին ստուգման ակտը կամ Աուդիտորական կազմակերպության եզրակացությունը (ըստ անհրաժեշտության):

Անշարժ գույքի գրավադրման դեպքում

1. Սեփականության վկայական (բնօրինակ)
2. Սեփականության իրավունքի հիմքը (բանկի պահանջով)
3. 3-րդ անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կողը (ՀՀՎՀ) և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու

մասին

4. Տեղեկանք “ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Պետական Միասնական Կադաստր”-ի տարածքային ստորաբաժանումից՝ գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ (ներկայացվում է Վարկի տրամադրման դրական որոշման դեպքում)
5. Համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն:

Այլ գույքի գրավադրման դեպքում

1. Գույքի ցանկը՝ նշելով չափի միավորը, քանակը, հաշվեկշռային արժեքը, և ձեռք բերման փաստաթղթերը
2. Ավտոմեքենայի դեպքում տեխնիկական անձնագիր և սեփականության իրավունքի վկայականը (բնօրինակ)
3. 3-րդ անձի գույքը գրավադրման դեպքում հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կոդը (ՀՀՎՀ) և իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին
4. Բանկի պահանջի դեպքում համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման հաշվետվություն:

Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է բանկը

1. Բանկը կարող է պահանջել ապահովագրել գրավի առարկան կորստյան և վնասվածքի ռիսկերից, ներկայացնել դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթեր
2. Անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ փաստաթղթեր:

Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակում կրկնվող վարկառուներից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Վարկային հայտ
2. Իրավասու մարմնի որոշում՝ Վարկ ստանալու և գույքը գրավադրելու վերաբերյալ
3. Տեղեկանք Վարկառուի կողմից կանոնադրության փոփոխության, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ
4. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության)
5. Ֆինանսական հաշվետվությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ, սոց հատկացում, եկամտահարկ):

Անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ փաստաթղթեր

Հաճախորդը պետք է ներկայացնի նշված փաստաթղթերի բնօրինակները կամ սահմանված կարգով վավերացված պատճենները:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության

ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն: